



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«17» հուլիսի 2015 թվական N 98-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 205-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 5-րդ մասի 1-ին պարբերությամբ, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Գյումրի համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2015թվականի բյուջեն հաստատելու մասին» N 205-Ն որոշմամբ հաստատված Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) վարչական մասի պահուստային ֆոնդը ավելացնել 31 000 000 (երեսունմեկ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամով և այն ուղղել ֆոնդային մաս, որից՝ 18 500 000 (տասնութ միլիոն հինգ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ 4/5/1 գործառական (5113) «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» տնտեսագիտական դասակարգման հոդվածին և 12 500 000 (տասներկու միլիոն հինգ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ 6/4/1 գործառական (5129) «Այլ մեքենաներ և սարքավորումներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածին,

2) 1-ին, 2-րդ և 3-րդ հատվածները՝ շարադրել նոր խմբագրությամբ համաձայն համապատասխանաբար N N 1-ին , 2-րդ, 3-րդ հավելվածների:

2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ կատարել համապատասխան փոփոխություններն օրենքով սահմանված կարգով:

Կողմ (14)

Դեմ (0)

Ձեռնպահ(0)

- Ա. Ադամյան
- Գ. Ադամյան
- Ա. Բաղեյան
- Ա. Բաղրամյան
- Մ. Գաբրյան
- Ա. Գրիգորյան
- Վ. Եղիզարյան

Հ.Խաչատրյան
Հ.Կարապետյան
Տ.Հովհաննիսյան
Վ. Հունանյան
Ն.Մեսրոպյան
Ռ.Մխիթարյան
Մ.Սահակյան

**ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝**

17 հուլիսի 2015թ.
ք.Գյումրի

Ս. Բ Ա Լ Ա Ս Ա Ն Յ Ա Ն

Ռ. ԱՍԱՏՐՅԱՆ